ՓԱՌԱՏՈՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

DOI: 10.52174/2579-2989_2023.4-25

Հիմնաբառեր. *փառատոն, փառատոնային զբոսաշրջություն, գաստրոփառատոն, դեստինացիա, մշակութային արժեք, ֆիդայատոն*

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է: 2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ-ում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

120-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ վեց մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ, ինչպես նաև մեկ բուհական դասագրքի հեղինակ: Հոդվածներից 13-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

Զբոսաշրջության համակարգում մեծ տեղ է գրավում փառատոնային զբոսաշրջությունը, որի հիմքում թեմատիկ տարբեր ուղղվածության միջոցառումներ են: Աշխարհում հատկապես հայտնի են Ռիոյի (Բրազիլիա) և Վենետիկի (Իտալիա) կարնավալները, Իսպանիայում՝ Լա տոմատինա, Գերմանիայում՝ Օկտոբերֆեստ (գարեջրի), Նևադայում՝ վառվող մարդու, Հնդկաստանում՝ Հոլի (գույների), Պորտուգալիայում՝ ավազե քանդակների և այլ միջազգային փառատոներ:

Մեծ է այս հանդիսությունների սոցիալ-տնտեսական ու մշակութային նշանակությունը մասնավորապես համայնքների համար. դրանք էապես նպաստում են վերջիններիս կայուն զարգացմանը:

ՀՀ-ում ևս վերջին տարիներին սկսել է զարգանալ փառատոնային զբոսաշրջությունը, ուստի հոդվածում կատարվում են մի շարք առաջարկություններ փառատոների կազմակերպման դեստինացիաների ընդլայնման, այդ մշակույթի առաջմղման, միջազգայնացման և այլ նկատառումներով:

Փառատոնային զբոսաշրջությունը ենթադրում է ճանապարհորդություն, որի հիմնական նպատակը փառատոներին մասնակցելն է: Վերջիններս որևէ թեմատիկ ուղղվածություն ունեցող (կրոնական, մշակութային, գաստրոնոմիական և այլն) միջոցառումներ են:

Աշխարհում հայտնի են.

1. Ռիո դե Ժանեյրոյի կարնավալը (Rio Carnival) (մոտ 2 մլն այցելությամբ), որը համարվում է համանման ամենամեծ միջոցառումը: Դա հինգ օր տևող տոնակա-

տարություն է, որն անցկացվում է ամեն տարի՝ Ս. Զատկից 40 օր առաջ: Պաշտոնապես սկսվում է ուրբաթ և ավարտվում երեք շաբթի՝ Մեծ Պահքի մեկնարկից առաջ: Այս հանդիսությունն ամփոփում է Բրազիլիայի իրական մշակույթը, որի ժամանակ մարդիկ երգում են, պարում և զվարճանում: Սամբայի շքերթները Ռիոյի կարնավալի կարևոր իրադարձություններից են, որին ներկայանում է սամբայի ավելի քան 200 դպրոց: Ռիոյի կարնավալին մասնակցում է նաև ավելի քան 300 նվագախումբ:

2. Նևադայի վառվող մարդու փառատոնը (Burning Man Festival, Nevada), որը մեկ շաբաթ տևողությամբ ամենամյա միջոցառում է, տեղի է ունենում ԱՄՆ-ի Նևադա նահանգի սև ժայռերով անապատում: Փառատոնն իր անվանումը ստացել է փայտե մեծ արձանի այրումից: Ամեն տարի դա տեղի է ունենում օգոստոսի վերջին երկուշաբթի օրվանից մինչև սեպտեմբերի առաջին երկուշաբթի: Մասնակիցները ցուցադրում են արվեստի տարբեր գործեր, ստեղծում ժամանակավոր քաղաք, համագործակցում իրար հետ: Փառատոնը գրավիչ է հատկապես արվեստագետների համայնքի համար: 2023 թ. մասնակիցների թիվը գերազանցել է 80000-ը, իսկ միջոցառմանը հատկացված տարածքը՝ 4 քառակուսի մղոնը (10 կմ²)[1]:

3. Գույների Հոլի փառատոնը Հնդկաստանում (Holi, the festival of colors): Հոլին նվիրված է գույներին, և այն տոնում են ամբողջ Ասիայի հինդուները, ինչպես նաև Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի որոշ տարածքներից եկածներ: Գարնանային այս փառատոնը հիմնականում տեղի է ունենում Հնդկաստանում և Նեպալում և համարվում է ամենակարևոր ու ամենավառ հանդիսություններից մեկը: Այն խորհրդանշում է բարու հաղթանակը չարի նկատմամբ, ինչպես նաև գարնան գալուստը՝ որպես հույսի և վայելքի եղանակ: Գույների ավանդույթը կապված է լորդ Կրիշնայի պատմությունների հետ, որը զբոսայգիներում խաղում էր իր սիրելի Ռադայի հետ՝ թրջելով նրան գունավոր ջրով: Նշվում է ամեն տարվա մարտին՝ լիալուսնի հաջորդ օրը:

Տոնակատարությունները սկսվում են Հոլիկայի այրմամբ, որը ներկայացնում է չարի մահը: Բոլորը միմյանց ցողում են գունավոր ջրով և չոր փոշով: Այս նպատակով օգտագործվում են գունավոր ջրով լցված փուչիկներ և ջրային ատրճանակներ: Միաժամանակ, մարդիկ այցելում են իրենց ընկերների ու հարազատների տներ, բաժանում քաղցրավենիք և այլ սննդամթերք:

[1] The Burning Man party is over. Now a massive cleanup begins, https://apnews.com/article/burning-man-flooding-nevada-clean-up-cebf509a4b0bf666f443363ed89c342b

4. Լա տոմատինա (La Tomatina) փառատոնը տեղի է ունենում յուրաքանչյուր օգոստոսի վերջին չորեքշաբթի՝ Իսպանիայի Բունյոլ քաղաքում: Այս միջոցառման ընթացքում մասնակիցները միմյանց վրա լոլիկ են նետում: Անվտանգության համար քաղաքային խորհուրդը հետևում է մի շարք կանոնների, ինչպես, օրինակ, կրել ակնոց՝ պաշտպանելու համար աչքերը և միմյանց վրա նետել միայն ճզմված լոլիկ՝ վնասվածքներից խուսափելու նպատառումով: Ամեն տարի այս փառատոնի ժամանակ Բունյոլի փողոցներում 100 000 կգ լոլիկ է օգտագործվում: La Tomatina-ն սկսվում է «palo jabon» կոչվող իրադարձությամբ, որի իմաստը հետևյալն է. բարձրանալ յուղված ձողի վրայով և դրա գագաթից նետել խոզապուխտ: Երբ մասնակիցների խմբից ինչ-որ մեկը հաջողության է հասնում այս միջոցառմանը, իշխանություններն ազդադարում են լոլիկով կռվի մեկնարկը: Մինչ այդ՝ ժամանում են լոլիկով բարձված բազմաթիվ բեռնատարներ: Այս փառատոնի համար լոլիկ է ներկրվում Իսպանիայի Էստրեմադուրա շրջանից: Միջոցառման ընթացքում անպակաս են երաժշտությունը, պարերը, շքերթներն ու հրավառությունները:

5. Մյունխենում տեղի ունեցող Օկտոբերֆեստ (Oktoberfest) գարեջրի փառատոնը (մոտ 6 մլն այցելությամբ) տեղի է ունենում սեպտեմբերի վերջին շաբաթից մինչև հոկտեմբերի առաջին շաբաթվա վերջը: Առաջին անգամ դա կազմակերպվել է 1810 թվականի հոկտեմբերի 12-ին: Մինչև 1892 թվականը՝ Օկտոբերֆեստի ժամանակ գարեջրի մատուցման համար օգտագործվել են ավանդական գավաթներ՝ պատրաստված քարից և մետաղից:

Հետագայում դրանք փոխարինվել են ժամանակակից ապակյա բաժակներով: Ամեն տարի փառատոնի հյուրերը սպառում են ավելի քան 7 միլիոն լիտր գարեջուր:

6. Ալբուկերկեի օդապարիկների միջազգային փառատոնը (Albuquerque International Balloon Fiesta), որը տեղի է ունենում ԱՄՆ-ի Նյու Մեքսիկո նահանգի Ալբուկերկե քաղաքում, աշխարհում համանման ամենամեծ տոնակատարությունն է: Անցկացվում է 1972 թվականից սկսած՝ հոկտեմբերի սկզբին և տևում ինը օր: Միջոցառման ընթացքում օդ է բարձրանում շուրջ 600 օդապարիկ: Փառատոնի այգին ընդգրկում է 365 ակր հսկայական տարածք: Սա ԱՄՆ-ի ամենամեծ ամենամյա միջոցառումն է և աշխարհում ամենաշատ լուսաբանվող ու նկարահանվող իրադարձությունը:

7. Վենետիկի կարնավալն Իտալիայի ամենամեծ փառատոներից մեկն է, որը տևում է երկու շաբաթ: Առաջին անգամ անցկացվել է 1162 թվականին: Իտալերեն անվանումն է՝ Carnevale di Venezia, իսկ գլխավոր առանձնահատկությունը՝ դիմակ կրելը: Ընդ որում, դիմակ պատրաստող վարպետները մեծ դերակատարություն ու-

նեն այս փառատոնի անցկացման գործում:

Կարնավալը ներառում է համերգներ, տարբեր տեսակի ներկայացումներ, որոնք բեմադրվում են փողոցներում և, իհարկե, վառվող մոմերով նավային շքերթ: Դիմակները նաև շատ գրավիչ հուշանվեր են քաղաք այցելող զբոսաշրջիկների համար:

8. Թայվանի՝ Լապտերների փառատոնն (Lantern Festival) անցկացվում է յուրաքանչյուր լուսնային տարվա առաջին լիալուսնի գիշերը: Թայվանի Պինգսի թաղամասի երկինքն այս փառատոնի ընթացքում զարդարվում է հազարավոր լապտերներով: Ընդ որում, գլխավոր լապտերը պատրաստվում է ըստ համապատասխան տարվա չինական կենդանակերպի նշանի: Լապտերների տեղադրությամբ պատկերվում են բազմաթիվ կենդանիներ՝ վիշապ, դինոզավր, թիթեռ և այլն: Միաժամանակ, փոքր լապտերներով ներկայացվում են պատմական ամենակարևոր իրադարձությունները: Տոնակատարություններն ուղեկցվում են լապտերների պատրաստմամբ, լապտերի կիրառմամբ հանելուկ խաղերով և հրավառությամբ:

9. Պորտուգալիայի ավազե քանդակների միջազգային փառատոնն (International sand sculpture festival) անցկացվում է երկրի Ալգարվե շրջանում՝ 2003 թվականից սկսած: Այստեղ ամեն տարի ներկայանում է 60 նկարիչ՝ ամբողջ աշխարհից, որոնք պատրաստում են մոտ 50 բարձրաքանդակ՝ 40000 տոննա ավազից: Յուրաքանչյուր անգամ փառատոնն ընթանում է որևէ խորագրի ներքո, որը վերաբերում է տեղական ավանդույթներին, ժողովրդական մշակույթին և դիցաբանությանը:

10. Հարբինի սառցե և ձյան քանդակների միջազգային փառատոնը (Harbin ice and snow festival) տեղի է ունենում Չինաստանի Հեյլունցզյան նահանգի Հարբին քաղաքում: Այն պաշտոնապես անցկացվում է ամեն տարվա հունվարի 5-ից փետրվարի 5-ը և ներառում սառցե ու ձյան քանդակների միջազգային մրցույթ, հսկայական սառցաբեկորներով ու հատուկ լուսավորությամբ շենքերի, առագաստանավերի պատրաստում, լող Սոնհուա գետում, արագ սահք և սառցե լապտերների ցուցադրություն: Այս փառատոնը, որպես ամենամյա ձմեռային իրադարձություն, հանրահռչակվել է 1985 թվականի հունվարի 5-ին: Հարբինին, ընդհանուր առմամբ, հատուկ է արկտիկական կլիման, և այն հարուստ է առատ բնական սառույցով և ձյունով: Փառատոնը խթանում է զբոսաշրջությունը՝ ամեն տարի գրավելով հազարավոր օտարերկրյա այցելուների[3]:

Զբոսաշրջիկների համար շատ սիրելի են գաստրոփառատոները: Դրանք, սովորաբար, անցկացվում են տարեկան պարբերականությամբ, և կենտրոնական տե-

[2] Top 10 Most Amazing Festivals Around The World, https://themysteriousworld.com/top-10-amazing-festivals-around-world/

ղում սննդի մատուցումն է: Նման փառատոները ավանդաբար համարվել են տարբեր համայնքների միավորման միջոց՝ բերքահավաքը նշելու և բերքառատ տարվան շնորհակալություն հայտնելու համար: Աշխարհում այսօր անցկացվում են հարյուրավոր գաստրոնոմիական փառատոներ՝ նվիրված տարբեր սննդատեսակների և խմիչքների: Օրինակ՝ մի շարք փառատոներ նվիրված են սոխին: Ամենահայտնի սոխի շուկան Բեռնում (Շվեյցարիա) է, սոխի տոնավաճառը՝ Վեյմարում (Գերմանիա), սոխի փառատոնը՝ Վալսում (Կատալոնիա, Իսպանիա): Ավելի քան երեսուն տարի սխտորի փառատոն է անցկացվում Գիլռոյ քաղաքում (Կալիֆորնիա, ԱՄՆ)՝ ամբողջ աշխարհի այցելուներին ներկայացնելով սխտորով պատրաստված յուրահատուկ բաղադրատոմսեր: Հյուսիսային Հունաստանի Էվրոսի տարածքում՝ Նեա Վիսայում ամռանը նույնպես սխտորի փառատոն է անցկացվում:

Գարեջրին են նվիրված Գարեջրի միջազգային փառատոնը (Պորտլենդ, ԱՄՆ, հունիսի վերջ), Ասիական գարեջրի փառատոնը (Սինգապուր, հունիսի վերջ), «Գարեջրի ամառ» (Տալլին, Էստոնիա, հուլիսի սկիզբ), «Գարեջրի բորսա» (Վիրսեն Դյուլկեն, Գերմանիա, հուլիսի սկիզբ), «Գարեջուր» (Ժատեց, Չեխիա) փառատոները: Սովորաբար, նման փառատոներում մատուցվում է 100-250 տեսակ գարեջուր[4]:

Օգոստոսին անցկացվող Բեռլինի գարեջրի միջազգային փառատոնում, ավանդաբար, իրենց արտադրանքն են ներկայացնում 350-ից ավելի գարեջրի գործարաններ՝ աշխարհի 90 երկրից, և այցելուները կարող են փորձել գարեջրի 2400-ից ավելի տեսակներ[5]:

Մեծ Բրիտանիայի գարեջրի փառատոնում, որը շատ զբոսաշրջիկների է գրավում, մատուցվում է գրեթե 800 տեսակի գարեջուր:

Հայտնի են նաև գինու փառատոները, մասնավորապես՝ «Բոժոլե Նովոն», որը տեղի է ունենում Բուրգունդիայում (Ֆրանսիա)՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերի երրորդ հինգշաբթի օրը[6]:

Իտալիայում՝ Թուրինից ոչ հեռու, սեպտեմբերին անցկացվում է «Կանելի՝ գինու քաղաք» գաստրոնոմիական փառատոնը, որը նվիրված է ոչ միայն գինուն, այլև իտալական լավագույն արտադրանքներին և ավանդական ուտեստներին:

Ներկայում մեծ տարածում ունեն նաև ծովամթերքի փառատոները: Ուելսում հոկտեմբերին անցկացվում է «Խեցգետնի շաբաթը», Կնիսնայում (Հարավային Աֆրիկա)՝ ոստրեների, Նիդերլանդներում հունիսի առաջին շաբաթ օրը՝ ծովատառեխի (վաճառքից ստացվող եկամուտն ուղղվում է բարեգործական նպատակներին), Ֆրանսիայում հոկտեմբերի վերջին՝ ծովախխունջների տոնը: Ֆինլանդիայում (Հելսինկի) հոկտեմբերին տեղի է ունենում շպրոտի փառատոն, որի ընթացքում անցկացվում է ծովախեցգետնից պատրաստված լավագույն ուտեստի մրցույթ[7]:

Գաստրոփառատոներից հայտնի են նաև պիցցայի (Նեապոլ, Իտալիա), հսկա ձվածեղի (Բեսիերես, Ֆրանսիա), կեռասի (Միչիգան), բուսակերների (Թաիլանդ) փառատոները, նրբաբլիթների մրցավազքը (Անգլիա)[8] և այլն:

Փառատոներ կազմակերպելիս կարևոր են մի շարք քայլեր, որոնք պետք է իրականացվեն հետևողական կերպով, մասնավորապես՝ պլանավորում, բյուջեի որոշում, աշխատակիցների հավաքագրում, ոճի և բովանդակության ստեղծում, միջոցառման

[3] Top 10 Most Amazing Festivals Around The World, https://themysteriousworld.com/top-10-amazing-festivals-around-world/
[4] Драчева Е.Л.,Христов Т.Т., Гастрономический туризм: современные тенденции и перспективы, https://cyberleninka.ru/article/n/gastronomicheskiy-turizm-sovremennye-tendentsii-i-perspektivy
[5] International Berlin beer festival, https://deutsche-delikatessen.de/en/international-berlin-beer-festival/
[6] Celebrate the famous Beaujolais Nouveaux at a five-day festival!, https://www.visitfrenchwine.com/en/event/celebrate-famous-beaujolais-nouveau-five-day-festival

նախապատրաստում և կազմակերպում, առաջմղում, արդյունքների գնահատում[9]: Այս ամենը պայմանավորում է փառատոների անցկացման արդյունավետությունը:

Փառատոնային զբոսաշրջությունն էական նշանակություն ունի ինչպես զբոսաշրջիկների, այնպես էլ փառատոնը հյուրընկալող վայրերի համար: Կարող ենք առանձնացնել փառատոնային զբոսաշրջության ընձեռած հնարավորությունները.

• Փառատոները թույլ են տալիս զբոսաշրջիկներին ծանոթանալ տեղական մշակույթի, ավանդույթների և սովորույթների հետ, իսկ համայնքին՝ միջոցառումների միջոցով պահպանել և արժեքավորել սեփական մշակույթը:

• Փառատոները սոցիալ-տնտեսական էական ազդեցություն ունեն հյուրընկալող համայնքների վրա, քանի որ գրավում են մեծ թվով զբոսաշրջիկների, ինչի արդյունքում ավելանում են հյուրանոցների, տրանսպորտի, սննդի, հուշանվերների և զբոսաշրջության հետ կապված այլ ծառայությունների ծախսերը: Սա խթանում է տեղական բիզնեսը, ստեղծում զբաղվածության հնարավորություններ և եկամուտ հյուրընկալող համայնքի համար:

• Փառատոները նպաստում են դեստինացիաների առաջմղմանը, քանի որ ծառայում են որպես դրանց յուրահատուկ հատկանիշները ցուցադրելու և այցելուներ գրավելու հարթակ: Դրանց միջոցով դեստինացիան դառնում է ճանաչված՝ համաշխարհային առումով: Փառատոնից գոհ զբոսաշրջիկը կրկին կայցելի տվյալ վայր և նույնը խորհուրդ կտա իր ընկերներին՝ դրանով իսկ մեծացնելով դեստինացիայի գրավչությունը:

• Փառատոները կարող են վաճառքի կազմակերպման եզակի կետեր դառնալ՝ տարբերակվելով մյուսներից և ստեղծելով մրցակցային առավելություն:

• Փառատոները միավորում են տեղական համայնքին, հնարավորություն տալիս բնակիչներին ակտիվորեն մասնակցելու իրենց մշակութային ժառանգության ցուցադրմանը: Փառատոնային զբոսաշրջությունը կարող է նպաստել համայնքի զարգացմանը, մշակույթի պահպանմանը և ավանդական արվեստների ու արհեստների զարթոնքին:

• Փառատոները հաճախ տեղի են ունենում որոշակի սեզոնների, ինչն օգնում է զբոսաշրջության պահանջարկն ավելի հավասարաչափ բաշխել տարվա ընթացքում՝ նվազեցնելով սեզոնայնությունը և ստեղծելով ավելի կայուն զբոսաշրջային արդյունաբերություն:

• Փառատոները հարթակ են բնակիչների և զբոսաշրջիկների միջև՝ սոցիալական փոխազդեցության և միջմշակութային փոխանակման համար: Դրանք խթանում են փոխըմբռնումը, հանդուրժողականությունը և բազմազանությունը:

Դեստինացիաները պատասխանատու կերպով պետք է կազմակերպեն և կառավարեն փառատոնային զբոսաշրջությունը՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են բնապահպանական կայունությունը, մշակութային զգայունությունը, ենթակառուցվածքները և տեղական համայնքների բարեկեցությունը՝ երկարաժամկետ օգուտներ ապահովելով և՛ զբոսաշրջիկների, և՛ բնակիչների համար:

Փառատոները ՀՀ-ում

ՀՀ-ում վերջին տարիներին կազմակերպվում են մի շարք փառատոներ, որոնք ևս մեկ կարևոր քայլ են հայերի և հյու-

[7] Драчева Е.Л.,Христов Т.Т., Гастрономический туризм: современные тенденции и перспективы, https://cyberleninka.ru/article/n/gastronomicheskiy-turizm-sovremennye-tendentsii-i-perspektivy

[8] 20 Popular Food Festivals Around The World In 2023 For Your Unconditional Love For Food, https://traveltriangle.com/blog/food-festivals-around-the-world/

[9] How to Plan an Event: 10 Step Event Planning Guide, https://guidebook.com/mobile-guides/event-planning-guide/, The Complete Step-by-Step Festival Planning Guide, https://www.initlive.com/blog/festival-planning, Festivals – how to organize them, https://www.artslaw.com.au/information-sheet/organising-a-festival/

ների ուշադրությունը հայկական մշակույթի, պատմության, արվեստի, խոհանոցի արժեքների վրա սևեռելու ուղղությամբ[10]: Չնայած ՀՀ-ում անցկացվող փառատոներին ներգնա և ներքին զբոսաշրջիկների մասնակցության թվի վերաբերյալ չկան հստակ վիճակագրական տվյալներ, այնուամենայնիվ, վերջին տարիներին մասնակցության աստիճանը բարձրացել է:

Հայաստանյան փառատոները համակարգելու, խթանելու նպատակով 2017 թ. «Իմ Հայաստան» ծրագրի աջակցությամբ ստեղծվել է «Ֆեստիվար» հայկական փառատոների ասոցիացիան[11]: Առավել հայտնի են տոլմայի, խորովածի, գինու փառատոները, որոնք անցկացվում են արդեն ավելի քան 10 տարի:

Տոլմայի փառատոնը, որի կազմակերպիչն է «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպությունը, առաջին անգամ տեղի է ունեցել 2011 թվականին: Նպատակը հայկական ավանդական ուտեստի՝ տոլմայի ժողովրդականացման ու հայկական խոհանոցի ոչ նյութական արժեքների ամրապնդումն է: 2022 թ. փառատոնի ժամանակ պատրաստվեց խաղողի թփով աշխարհի ամենաերկար տոլման՝ 193 մ 80 սմ, որը գրանցվեց հայկական «Դյուցազնագրքում»[12]:

Խորովածի փառատոնն անցկացվում է 2009 թ.-ից սկսած՝ Ախթալա քաղաքում: Նպատակը հայկական ավանդական խոհանոցի և արվեստների տարածումն է մարզերում, ինչպես նաև Ախթալայի և հարակից բնակավայրերի զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծումն ու զարգացումը[13]: Խորովածի տոնին մասնակցում են հասարակական կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների, ռեստորանների և սրճարանների ներկայացուցիչներ, անհատ խոհարարներ[14]: 2017 թվականին կազմակերպիչներն Ախթալան

հռչակեցին խորովածի համաշխարհային մայրաքաղաք[15]: Փառատոնի նախաձեռնողներն են «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման» հասարակական կազմակերպությունը, Ախթալայի քաղաքապետարանը:

«Արենի» գինու փառատոնը կազմակերպվում է 2009 թ.-ից սկսած՝ Արենի գյուղում, «Արենի գինու փառատոն» հիմնադրամի կողմից: Դա ներառում է գինու պատրաստման, խաղողի ճզմման ընթացակարգեր, ինչպես նաև գինու համտես ու վաճառք:

2023 թ.-ի համար նախատեսված փառատոները ներկայացված են նկար 1-ում:

Ըստ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2023 թվականի ծրագրի՝ նախատեսված է պետական աջակցություն Հայաստանում առնվազն 8 փառատոնի կազմակերպմանը, որի բյուջեն 200 մլն դրամ է, իսկ ամբողջ ծրագրի բյուջեն՝ 1 մլրդ դրամ[16]:

Փառատոների կազմակերպումը ՀՀ-ում նպաստում է ինչպես մշակութային արժեքների պահպանմանը և արժևորմանը, այնպես էլ ներքին և միջազգային զբոսաշրջության զարգացմանը, սոցիալ-տնտեսական օգուտի ստացմանը: Չնայած դրժվար է քանակապես ստույգ գնահատել, թե փառատոները որքան ֆինանսական օգուտ են տալիս համայնքին և մասնա-

[10] Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն). Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, էջ 271-277:

[11] «Ֆեստիվար» հայկական փառատոների ասոցիացիա, https://www.facebook.com/ArmenianFestivals/

[12] «Տոլմայի փառատոն»՝ հայկական ոգով. Նիկոլայ Բալյանը պատրաստեց աշխարհի ամենաերկար խաղողի թփով տոլման՝ 193 մ 80 սմ երկարությամբ, https://newinfo.am/am/Post/44590?utm_source=dlvr.it&utm_medium=facebook&fbclid=IwAR2rqcdo4hkOS41B33ImkEcI837eLrdV-pxKOI-rD7LcvNYr5N9hMSRYfm4

[13] Այսուհետ՝ խորովածի միջազգային փառատոն, https://hraparak.am/post/59aee02c39812e156fba670b

[14] Համի տոն Ախթալայում. Հայաստանում մեծ շուքով անցկացվեց Խորովածի փառատոնը, https://newsarmenia.am/am/news/society/hami_ton_akhtalayum_hayastanum/

[15] Ախթալան հռչակվել է խորովածի համաշխարհային մայրաքաղաք, https://armeniatv.am/hy/63103-63103

վոր հատվածին, սակայն, ըստ տարբեր փորձագիտական տվյալների, դրանց արդյունքում շահում են բոլոր մասնակիցները: Տնտեսավարողները, վարձակալելով տաղավարներ ու ներկայացնելով իրենց արտադրանքը, ապահովում են նաև վաճառք, որի ծավալները և ստացված ֆինանսական մուտքերը կախված են փառատոնի բնույթից: Համայնքի բնակիչները ևս կարող են ցուցադրել ու վաճառել իրենց արտադրանքը: Փառատոնը նպաստում է համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացմանը:

Հաշվի առնելով Հայաստանում վերջին տարիներին կազմակերպվող փառատոնների քանակի աճը՝ կարելի է ասել, որ համապատասխան զբոսաշրջությունը զարգացման մեծ հնարավորություն ունի և կարող է ներգրավել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային զբոսաշրջիկների:

Փառատոնային զբոսաշրջության զարգացման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ քայլերը.

- Փառատոները միջազգայնացնել՝ պատշաճ կերպով դրանք գովազդելով թիրախային շուկաներում և ներգրավելով զբոսաշրջիկների: Փառատոնների լուսա-

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Հայկական փառատոների օրացույց, 2023 թ.[17]

[16] ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թ. դեկտեմբերի 9-ի N2024-Ա հրամանը՝ «2023 թվականի աջակցություն զբոսաշրջության զարգացմանը ծրագիրը, 2023 թ. ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը» հաստատելու մասին, https://www.mineconomy.am/media/22553/Tourism%20%282%29.pdf

[17] FestivAr: Association of Armenian Festivals, https://www.facebook.com/photo?fbid=571890931741721&set=pcb.571891258408355

բանման համար կիրառել տարբեր միջոցներ՝ սոցիալական ցանցեր, կայքեր, ճանապարհորդական բլոգներ և ավանդական գովազդ՝ լայն լսարան ունենալու նպատակով:

• ՀՀ զբոսաշրջության պաշտոնական կայքէջում առանձին բաժնով ներկայացնել երկրում անցկացվող փառատոները՝ նկարագրելով դրանք և նշելով անցկացման ժամկետները, ինչը թույլ կտա զբոսաշրջիկին այց նախապատրաստելիս հաշվի առնել նմանատիպ միջոցառումներին հնարավոր մասնակցությունը:

• Ընդլայնել փառատոների անցկացման աշխարհագրությունը՝ հիմնվելով տարբեր մարզերի մշակութային և այլ առանձնահատկությունների ու ռեսուրսների վրա: Անցկացնել թեմատիկ բնույթի փառատոներ՝ նպաստելով տարբեր շրջանների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

• Համագործակցել համայնքների, զբոսաշրջության ոլորտի կազմակերպությունների հետ: Ներկայում ՀՀ որոշ վայրերում համայնքների ջանքերով կազմակերպվում են միջոցառումներ, որոնք կարիք ունեն գովազդման, հանրայնացման և շատ այցելուներ ներգրավելու: Ուստի անհրաժեշտ է ընդլայնել համագործակցությունը պետական և մասնավոր հատվածի, ինչպես նաև զբոսաշրջային գործակալությունների, բլոգերների, ինֆլյուենսերների հետ: Օրինակ՝ Արագածոտնի մարզի Աշնակ գյուղում ամեն տարի մայիսի 27-ին (հայ ազգային ազատագրական շարժման հերոս, հայդուկապետ Գևորգ Չաուշի մահվան օրը) տեղի է ունենում «Ֆիդայատոն» մշակութային միջոցառումը, որի նպատակն է բարձր պահել ազգային ազատատենչ ոգին: Միջոցառման ժամանակ Գևորգ Չաուշի թանգարանի բակում ներկայացվում են հայրենասիրական և ազգագրական երգեր ու պարեր: Սույն միջոցառումը կարելի է վերածել «Ֆիդայատոն» համազգային փառատոնի և վերոնշյալ մարքեթինգային քայլերի արդյունքում ներգրավել ներքին ու միջազգային զբոսաշրջիկների՝ միաժամանակ ցուցադրելով ազգային մշակույթն ու հաղթական ոգին:

• Կազմակերպել նոր փառատոներ, որոնք կընդգրկեն հայկական խոհանոցի, սպորտի, մշակույթի տարբեր տեսակներ՝ երգի, պարի, բանահյուսության, արվեստի և այլ ոլորտներ: Օրինակ՝ Արագածոտնի մարզի Աշնակ գյուղում կարելի է անցկացնել ծիրանի, ինչպես նաև սասունցիների երգի ու պարի, Աշտարակում՝ ընկույզի ու շարանի, Լոռու մարզում՝ պանրի, Արարատում՝ խնձորի ու դեղձի, Մեղրիում՝ նռան, Գյումրիում՝ թատրոնի ու հումորի, Դսեղում՝ ժողովրդական բանահյուսության, նաև գորգագործության ու ասեղնագործության փառատոներ և այլն:

Զբոսաշրջության կոմիտեի, ՏԻՄ, զբոսաշրջության ոլորտի տարբեր կազմակերպությունների համագործակցությամբ վերոնշյալ քայլերի իրականացումը կնպաստի նորանոր փառատոների կազմակերպմանը, ինչն էլ, իր հերթին, կխթանի ներքին և ներգնա զբոսաշրջության զարգացումը, մշակութային արժեքների և տարածքների պահպանումը, համայնքների սոցիալ-տնտեսական կյանքի աշխուժացումը, զբաղվածության հնարավորությունների, ենթակառուցվածքների ստեղծումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ախթալան հոչակվել է խորովածի համաշխարհային մայրաքաղաք, https://armeniatv.am/hy/63103-63103
2. Այսուհետ՝ խորովածի միջազգային փառատոն, https://hraparak.am/post/59aee02c39812e156f-ba670b
3. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: Մեկնարկ ՍՊԸ, 2020, 622 էջ:
4. Համի տոն Ախթալայում. Հայաստանում մեծ շուքով անցկացվեց Խորովածի փառատոնը,

https://newsarmenia.am/am/news/society/hamiton_akhtalayum_hayastanum/
5. ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2022 թ. դեկտեմբերի 9-ի N2024-Ա հրամանը՝ «2023 թվականի աջակցություն զբոսաշրջության զարգացմանը ծրագիրը, 2023 թ. ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը» հաստատելու մասին, https://www.mineconomy.am/media/22553/Tourism%20%282%29.pdf
6. «Տոլմայի փառատոն»՝ հայկական ոգով. Նիկոլայ Բալյանը պատրաստեց աշխարհի ամենաերկար խաղողի թփով տոլման՝ 193 մ 80 սմ երկարությամբ, https://newinfo.am/am/Post/44590?utm_source=dlvr.it&utm_medium=facebook&fbclid=IwAR2rqcdo4hkOS41B33ImkEcI837eLrdV-pxKOI-rD7LcvNYr5N9hMSRYfm4
7. Ֆեստիվալ հայկական փառատոների ասոցիացիա, https://www.facebook.com/ArmenianFestivals/
8. Драчева Е.Л., Христов Т.Т., Гастрономический туризм: современные тенденции и перспективы, https://cyberleninka.ru/article/n/gastronomicheskiy-turizm-sovremennye-tendentsii-i-perspektivy
9. Celebrate the famous Beaujolais Nouveaux at a five-day festival!, https://www.visitfrenchwine.com/en/event/celebrate-famous-beaujolais-nouveau-five-day-festival
10. Festivals – how to organize them, https://www.artslaw.com.au/information-sheet/organising-a-festival/
11. FestivAr: Association of Armenian Festivals, https://www.facebook.com/photo?fbid=571890931741721&set=pcb.571891258408355
12. How to Plan an Event: 10 Step Event Planning Guide, https://guidebook.com/mobile-guides/event-planning-guide/
13. International Berlin beer festival, https://deutsche-delikatessen.de/en/international-berlin-beer-festival/
14. The Burning Man party is over. Now a massive cleanup begins, https://apnews.com/article/burning-man-flooding-nevada-cleanup-cebf509a4b0bf666f443363ed89c342b
15. The Complete Step-by-Step Festival Planning Guide, https://www.initlive.com/blog/festival-planning
16. Top 10 Most Amazing Festivals Around The World, https://themysteriousworld.com/top-10-amazing-festivals-around-world/
17. 20 Popular Food Festivals Around The World In 2023 For Your Unconditional Love For Food, https://traveltriangle.com/blog/food-festivals-around-the-world/

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ФЕСТИВАЛИ - КАК ГАРАНТИЯ ПОВЫШЕНИЯ ЦЕННОСТИ КУЛЬТУРЫ И РАЗВИТИЯ ТУРИЗМА

Большое место в системе туризма занимает фестивальный туризм, основу которого составляют фестивали различной тематической направленности. Среди известных фестивалей в мире - карнавал в Рио, фестиваль Ла Томатина в Испании, фестиваль пива Октоберфест в Германии, фестиваль горящего человека в Неваде, фестиваль красок Холи в Индии, Венецианский карнавал, международный фестиваль песчаных скульптур в Португалии и др.

Фестивали имеют большое социально-экономическое и культурное значение для сообществ, поэтому их организация может способствовать устойчивому развитию сообществ.

В последние годы в РА также начал развиваться фестивальный туризм. В статье даны рекомендации по расширению направлений для проведения фестивалей в РА, популяризации и интернационализации фестивалей, развитию фестивального туризма.

Ключевые слова: *фестиваль, фестивальный туризм, гастрофестиваль, дестинация, культурная ценность, день борцов за свободу*

Gayane TOVMASYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE,
PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

FESTIVALS AS A GUARANTEE OF INCREASING THE VALUE OF CULTURE AND TOURISM DEVELOPMENT

Festival tourism occupies a large place in the tourism system, the basis of which are festivals of various thematic directions. Among the famous festivals in the world are the carnival in Rio, the La Tomatina festival in Spain, the Oktoberfest beer festival in Germany, the Burning man festival in Nevada, the Holi festival of colors in India, the Venice Carnival, the International sand sculpture festival in Portugal, etc.

Festivals are of great socio-economic and cultural importance for communities, so their organization can contribute to the sustainable development of communities.

In recent years, festival tourism has also begun to develop in the RA. The article gives recommendations on expanding the destinations of organizing festivals in the Republic of Armenia, popularizing and internationalizing festivals, and developing festival tourism.

Keywords: *festival, festival tourism, gastronomic festival, destination, cultural value, day of freedom fighters*